247

1. Մեկն ընթրիք սարքեց, կանչեց բոլորին.
- Պատրաստ է, կանչե՛ք հրավիրյալներին,
Կանչե՛ք խնջույքին, Իմ մեծ ընթրիքին,
Կանչեք բոլորին մեծ հարսանիքին:

2. - Ահա հրավերը, արի՛ խնջույքին,
Պատրաստ է, արի՛ մեծ հարսանիքին:
- Եզներ եմ առել, ուզում եմ փորձել,
Ես չեմ կարող գալ, շտապում եմ գնալ:

3. - Ահա հրավերը, արի՛ խնջույքին,
Պատրաստ է, արի՛ մեծ հարսանիքին:
- Ես կին եմ առել, դրա համար էլ
Ես չեմ կարող գալ, շտապում եմ գնալ:

4. - Ահա հրավերը, արի՛ խնջույքին,
Պատրաստ է, արի՛ մեծ հարսանիքին:
- Ես արտ եմ առել, բայց դեռ չեմ տեսել,
Շտապում եմ գնալ, ես չեմ կարող գալ:

5. Հիմա դո՛ւրս եկեք փողոցներն իսկույն,
Եվ տեսեք՝ ո՞վ կա թշվառ ու անտուն,
Կանչե՛ք բոլորին, խեղանդամներին,
Կույր ու կաղերին և աղքատներին:

6. Այսօր է ժամը, ժամը փրկության,
Կանչում է այսօր Քո Փրկիչ Արքան,
Շուտ թող ամեն բան՝ թե՛ արտ և թե՛ կին,
Թե՛ եզ, թե՛ աշխարհ. ուղղիր քո ճամփան: